ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 13

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

(Периодический сборник научных статей)

№ 13

Ереван
Издательство ЕГУ
2017

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES

JOURNAL OF ORIENTAL STUDIES
(scholarly periodical journal)

№ 13

YEREVAN
YSU PRESS
2017

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելիքյան Գուրգեն բ. գ. թ., պրոֆեսոր *(նախագահ),* Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., դոցենտ , Կարապետյան Ռուբեն պ.գ.դ., Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր, Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ, Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ, Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր, Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր, Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ, Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան), Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.թ., Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան), Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ), Գրեկյան Երվանդ պ.գ.դ., Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա), Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ, պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2017

Ղանալանյան Տիգրան [1]

ՀԱՅԵՐԻ ԱՐՏԱԳԱՂԹԸ ՀՈՐԴԱՆԱՆԻՑ
(1950-1970-ական թթ.)

Բանալի բառեր՝ *պաղեստինահայեր, արաբա-իսրայելական պատերազմ, Երուսաղեմ, արտագաղթ, Ամման, ԱՄՆ, սփյուռք, համայնք*

XX դ. 40-ական թվականները և հաջորդող տասնամյակները հավանաբար իրադարձություններով ամենահագեցածն էին Հորդանանի հայ համայնքի պատմության մեջ: Նախ այն, համալրվելով հարևան Պաղեստինից եկած հայերով, հասավ իր թվաքանակի բարձրակետին, ապա մի քանի տասնամյակների ընթացքում արտագաղթի հետևանքով նորից նվաղեց: Հենց այդ արտագաղթի լուսաբանմանն էլ նվիրված է սույն հոդվածը:

1944 թ. ըստ ՀԽՍՀ արտաքին գործերի նախարար Ս. Կարապետյանի տեղեկանքի՝ Անդրհորդանանի հայերի թիվը 2 հազար էր[2]: 1947 թ. այստեղ ապրում էր մոտ 200 հայ ընտանիք (130-ը՝ Ամմանում, 17-ը՝ Քարաքում, 9-ը՝ Ռուսեյֆայում, 8-ը՝ Զարքայում, 5-ը՝ Իրբիդում, 5-ը՝ Աջլունում, 5-ը՝ Սալթում, իսկ մյուսները՝ ցրված երկրի զանազան կողմերում): Հետաքրքիր է, որ զբաղմունքի տեսակները հիմնականում առանձնանում էին ըստ բնակավայրերի (Քարաքում՝ մանր արհեստավորներ, Ռուսեյֆայում՝ պարտիզպաններ, Զարքայում՝ զինվորականներ, Իրբիդում, Սալթում և Աջլունում՝ արհեստավորներ, ջաղացպաններ, պարտիզպաններ): Ամմանի համայնքը գերազանցապես բաղկացած էր մանր առևտրականներից և

[1] Պ.գ.թ., ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի ասիստենտ, tghanalanyan@ysu.am
[2] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 326, ց. 1, գ. 10, թ. 1:

արհեստավորներից, կային նաև որոշ թվով պետական և զինվորական պաշտոնյաներ: Ամմանի ազգային վարժարանի աշակերտների թիվը 98 էր, ուսուցիչներինը՝ 6[3]:

Արաբա-իսրայելական պատերազմի հետևանքով 1948-1949 թթ. Հորդանան տեղափոխվեցին հազարավոր պաղեստինահայեր: Անցնելով Հորդանան գետի արևելյան ափ՝ նրանց մեծամասնությունը հաստատվեց Ամմանում, իսկ մի քանի ընտանիքներ Զարքայում և Իրբիդում[4]:

Նորեկ պաղեստինահայերը թե՛ քանակապես, թե՛ որակապես զգալիորեն փոխեցին Հորդանանի համայնքի դիմագիծը: Երկու կարևորագույն կառույցների՝ դպրոցի և եկեղեցու հիմնադրումը կատարվեց այստեղ Երուսաղեմից մեծ թվով հայերի հաստատվելուց հետո: Այսպես եթե Յուզբաշյան-Գյուլբենկյան դպրոցը հիմնվեց 1949 թ., ապա Ամմանի Սուրբ Թադևոս եկեղեցին կառուցվեց 1967 թ., երբ վեցօրյա պատերազմից հետո Երուսաղեմից նորից զգալի թվով հայեր եկան Հորդանան: Նույն 1949 թ. ՀԲԸՄ-ն բացեց իր մասնաճյուղն Անդրհորդանանում[5]: 1950-ական թթ. սկզբում այստեղ աշխուժացավ հայկական կառույցների գործունեությունը, մասնավորապես կազմվեց ՀՅԴ օրիորդաց կազմակերպություն՝ 30 և ՀՄԸՄ մասնաճյուղ՝ 160 անդամներով[6]: Ամմանի հայ համայնքի կարևորության աճի մասին «Զարթօնք» թերթը գրում է. «Յորդանանի մայրաքաղաք Ամմանի հայագաղութը կարեւոր գաղութ մը դարձած է Մերձաւոր Արեւելքի մէջ: Պաղեստինի ծանօթ դէպքերէն վերջ մանաւանդ Երուսաղէմի,

[3] Տե՛ս «Էջմիածին», 1947, թիվ 5-6, էջ 90-91:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 60, թ. 24-25:
[5] Տե՛ս Derderian-Aghajanian A., Armenians' Dual Identity in Jordan, International Education Studies, 2009, Vol. 2, No 3, p. 38.
[6] Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 1951, թիվ 7, էջ 107:

Եաֆայի, Հայֆայի հայերը մեծ մասամբ գաղթած և հաստատուած են Ամման»[7]:

Արդեն 1948 թ. Հորդանանի հայերի թիվը հասաւ 8 հազարի[8]: Սակայն նրանց մի մասը երկար չմնաց այստեղ, այլ արտագաղթեց ԱՄՆ. «Իսրայէլէն Յորդանան անցնող հայերը ամէն հարստութիւն կորսնցուցած էին եւ 1948ին նոր կեանք մը սկսան: Շնորհիւ իրենց աշխատասիրութեան, ուշիմութեան եւ արաբ վարիչներու բարեացակամութեան, Յորդանանի մէջ հայերը սկսան դարմանել իրենց նիւթական կորուստները: ...Բայց նոյն ցաւը, նոյն անտիրութիւնը այս գաղթուին մէջ ալ: Չենք գիտեր թէ ինչպէս եւ ինչու, օրին մէկը, Անչան[9] սկսաւ կազմակերպել այստեղի հայերուն արտագաղթը դէպի Հիւս. Ամերիկա: Հոն հասնողներէն մէկ երկուքին ողբերգութեան արձագանգը կարդացինք թերթերու մէջ: ...Դարձեալ կրկնենք, որ Յորդանանէն հեռացողները ո՛չ թէ անգործներ կամ չքաւորներ են, այլ որոշ չափով բարեկեցիկ հայեր, տուն եւ արհեստանոց ունեցողներ: Անոնք կերթան հեռաւոր վայրեր, իբրեւ թէ խաղաղութիւն գտնելու, բայց պարզապէս նիւթական կեանքը աւելի լաւ վայելելու համար»[10]: Արդյունքում 1956 թ. Հորդանանի հայ համայնքը հաշվվում էր 5 հազար հոգի[11]:

Ա. Անդրեասյանը, խոսելով Հորդանանի հայ համայնքի մասին, նշում է. «Յորդանանի հայ համայնքները, կեդրոնացած Երուսաղէմի եւ մայրաքաղաք Ամմանի մէջ, յաճախ արտաքին աղէտներու սարսափները եւ ներքին խռովութեանց մղձաւանջը

[7] «Զարթօնք», Բեյրութ, 21.XI.1952, էջ 3:
[8] Տե՛ս «Գեղարդ» Սուրիահայ տարեգիրք, հ. Ե, Հալէպ, 1996, էջ 134:
[9] ԱՆՉԱ (ANCHA, American National Committee to Aid Homeless Armenians): ԱՆՉԱ-ի գործունեության մասին տե՛ս Zadoian H., Our Brothers' Keepers: The American National Committee to Aid homeless Armenians (ANCHA), New York, 2012: Ղանալանյան Տ., Տեղահանված հայերի փոխադրումը Ամերիկա Երկրորդ աշխարհամարտից հետո, «Էջմիածին», 2015, թիվ ԺԲ, էջ 69-89:
[10] «Հայրենիք», Բոստոն, 17.I.1957, էջ 2:
[11] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 60, թ. 24-25:

ապրեցան: ...երբ միւս ռազմադաշտերը խաղաղած էին զինադադարով, արաբ-հրէական բուռն կռիւները բռնկեցան եւ դարձեալ բնաւեր թշուառութեան մատնեցին Պաղեստինի հայ գաղութը, նոր տարագրութեամբ մը զայն վերածելով անհայրենիք բեկորներու:

Անոնցմէ 4-5 հազար հոգի ապաստան գտան Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի շրջափակէն ներս, իբրեւ ապաւէն հուրի ու սուրի նախճիրին եւ քաղցի սոսկումին դէմ: Ուրիշ պանդխտական կարաւաններ ուղղուեցան դէպի Ամման, հետզհետէ հոն կազմելով 6-7000 անձերով հայկական նոր համայնք մը: Եւ տակաւին, հարիւրաւոր ընտանիքներ արտագաղթեցին դէպի հեռաւոր աշխարհներ, մինչեւ հիւսիսային եւ հարաւային Ամերիկա: Եղերական ճակատագրով մը, անոնց խոշորագոյն մասը ամբողջապէս կորսնցուցեր էր տուն, կալուած ու ստացուածք եւ քանիերորդ անգամ ըլլալով՝ կը հարկադրուէր վերսկսիլ ոչինչէն...»[12]:

Ըստ Ս. Գասպարյանի՝ 1960-ական թթ. սկզբում Հորդանանում ապրում էր 8 հազար հայ[13]: Նրանք զբաղվում էին արհեստագործությամբ և առևտրով, աշխատում պետական հաստատություններում: Հորդանանում կային հինգ հայկական դպրոցներ, որտեղ սովորում էր 830 հոգի, 300-ն էլ հաճախում էր օտար դպրոցներ: Ծանր սոցիալ-տնտեսական դրության պատճառով շատ հայ երեխաներ չէին կարողանում կրթություն

[12] Անդրէասեան Ա., Սփիւռքը եւ հայրենիքը (Տպաւորութիւններ եւ դատումներ), Պէյրութ, 1962, էջ 39-40:

[13] Տե՛ս Գասպարյան Ս., Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Երևան, 1962, էջ 142:

ստանալ: Երուսաղեմի Թարգմանչաց վարժարանում 1959-1960 թթ. կային 360 աշակերտներ և 30 դասավանդողներ[14]:

Ըստ Հորդանանում ԽՍՀՄ դեսպանության 1967 թ. սեպտեմբերի 7-ի Հորդանանի հայ համայնքի մասին տեղեկանքի՝ այստեղի հայերի թիվը 10 հազար էր, որից 6 հազարը բնակվում էր Երուսաղեմի արաբական հատվածում (միայն Սբ. Հակոբի վանքում՝ 1200 հոգի), 3 հազարը՝ Ամմանում, մնացածն էլ ցրված էին Հորդանանի այլ բնակավայրերում (Իրբիդ, Նաբլուս, Մաֆրաք, Աջլուն, Զարքա և այլն): Նրանք առավելաբար արհեստավորներ և ագարակատերեր, զբոսաշրջային կազմակերպությունների և ավիաընկերությունների աշխատակիցներ, մանր ձեռնարակատերեր, հոգևորականներ և սովորողներ էին: Հայերի դերը հատկապես նշանակալի էր զբոսաշրջության ոլորտում, ինչպես նաև որոշ արհեստներում (ոսկերչություն, հուշանվերների պատրաստում, կոշկակարություն, լուսանկարչություն և այլն): Սակավաթիվ հայեր աշխատում էին պետական վարչական համակարգում, ինչպես նաև ՄԱԿ-ի հետ կապված տարբեր կառույցներում[15]:

1956 թ. Սուեզի ճգնաժամի շրջանում հայերի արտագաղթը Հորդանանից ավելի արագացավ[16]: Ըստ Հորդանանում ԽՍՀՄ դեսպանության 1967 թ. սեպտեմբերի 7-ի վերոնշյալ տեղեկանքի՝ հատկապես 1964 թ. հետո նկատվեց հայերի արտագաղթ դեպի Ավստրալիա, Կանադա և ԱՄՆ: Միջինում տարեկան Հորդանանը լքում էին 50-100 ընտանիքներ (300-500 հոգի): Դա առաջին հերթին պայմանավորված էր աշխատանքի, երեխաների ապագայի և այլ պատճառներով: Առկա էր կրոնական ճնշում, ինչպես նաև հայերի

[14] Տե՛ս Тер-Мкртичян Л., Армяне в странах Арабского Востока на современном этапе. Москва, 1965, с. 39.
[15] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 425, թ. 2-3:
[16] Տե՛ս նույն տեղում, ֆ. 875, ց. 13, գ. 206, թ. 5:

նկատմամբ խոչընդոտներ՝ Հորդանանի պետական ապարատի ցածր և միջին օղակներում: Այդ պատճառով հայ երիտասարդները որպես կանոն միջնակարգ և թերի միջնակարգ կրթություն ստանալուց հետո ամեն ինչ անում էին Հորդանանը լքելու և ուսումը Հայաստանում, Եվրոպայում կամ ԱՄՆ-ում շարունակելու համար[17]: 1970 Սև սեպտեմբերի դեպքերը ևս նոր ազդակ հանդիսացան հայերի արտագաղթի համար[18]: Նշելի է, որ քննարկվող շրջանում Հորդանանից արտագաղթում էին ոչ միայն հայերը: Հատկապես մեծ էր աշխատանքային միգրացիան դեպի Ծոցի երկրներ[19]:

Հորդանանը ինչպես և Իսրայելը լքելու հայերի գլխավոր դրդապատճառը քաղաքական անկայուն վիճակն ու պատերազմներն էին: Երկու կողմերում էլ գտնվող հայերն ապագան տեսնում էին մշուշոտ առավել ևս, որ իրենք երկու ուժերի մեջտեղում հայտնված փոքրամասնություն էին: Իսրայելի տարածքում բնակվողները զգում էին խտրական վերաբերմունք հրեաների կողմից, միաժամանակ վախենում թե ի՞նչ կլինի արաբների կողմից Երուսաղեմի գրավման դեպքում, իսկ

[17] Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 425, թ. 4:

[18] Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 16.III.1977, էջ 3:

[19] 1987 թ. Հորդանանից դուրս աշխատանքային միգրանտների թիվը պաշտոնական տվյալներով 350 հազար էր, որից ավելի քան 160 հազարը Սաուդյան Արաբիայում: Արտագաղթում էին լավ կրթություն ունեցող մասնագետները, որոնց աշխատանքի համար լայն ասպարեզ էին նավթի արագ աճող արդյունահանման պայմաններ ստացած Ծոցի երկրները: Արտասահմանում աշխատող հորդանանցիների մեծ մասը պաղեստինյան ծագում ուներ, տե՛ս Jordan: A Country Study, ed. by Metz Helen Chapin, Washington, D.C: Federal Research Division, Library of Congress, 1991, p. 93.

Հորդանանում բնակվողները չէին ցանկանում կռվել իսրայելցիների դեմ[20]:

Համաձայն Հորդանանում ԽՍՀՄ դեսպանության հյուպատոսական բաժնի վարիչի Հորդանանի հայ համայնքի մասին 1971 թ. տեղեկանքի՝ դեպի ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա և Լիբանան 1950-ական թթ. սկսված հայերի արտագաղթի հետևանքով 1970 թ. այստեղ մնացել էին 2350 հայեր: 1971 թ. հայերի տեղաբաշխումը Հորդանանում ուներ հետևյալ տեսքը. Ամմանում՝ 300 ընտանիք, Զարքայում՝ 25, Իրբիդում՝ 20, Ռուսեյֆայում՝ 10, Գոռ Էլ Սաֆիում՝ 10, Աքաբաում՝ 6, Քարաքում՝ 4, Աջլունում՝ 3[21]: Բնականաբար, հայերի կտրուկ նվազումն առաջին հերթին պայմանավորված էր 1967 թ. հունիսի վեցօրյա պատերազմի արդյունքում ամբողջ Երուսաղեմի անցմամբ Իսրայելին: Եթե նախկինում Հորդանանի հայերի թիվը հաշվվում էր 6-10 հազար, ապա դրանից հետո՝ 2-4 հազար:

Ըստ վերը հիշատակված տեղեկանքի՝ Ամմանի հայկական դպրոցը 1971 թ. ուներ 190 աշակերտ, որից 45-ը մանկապարտեզի սաներ, իսկ մյուսները դպրոցականներ: Այն ավարտողները սովորում էին պետական դպրոցներում (1971 թ. պետական դպրոցներում սովորում էր մոտ 100 հայ աշակերտ): Արտասահմանում բարձրագույն կրթություն ստացող հորդանանահայերի թիվը 150 էր, որից 50-ը՝ ՀԽՍՀ-ում: 1971 թ. հայ կաթոլիկների թիվը շուրջ 300 հոգի էր (50 ընտանիքներ): Արտագաղթի հետևանքով, բացի կրթական հաստատություններից, ուժատվում էին նաև կուսակցական մարմինները: Ըստ նույն տեղեկանքի՝ Հորդանանի ՀՅԴ կառույցը

[20] Տե՛ս Kirkland J.R., Armenian Migration, Settlement and Adjustment in Australia, with Special Reference to the Armenians in Sydney, PhD thesis, Australian National University, 1980, p. 105.

[21] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 60, թ. 24-25:

վերջին շրջանում էապես թուլացել էր՝ ղեկավար մի շարք անդամների ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա արտագաղթելու հետևանքով[22]:

Հայերի շարունակական արտագաղթը Հորդանանից շոշափելի քայլերի չմղեց Խորհրդային Հայաստանի կուսակցական ու պետական մարմիններին: Վերջիններս տեղյակ էին, որ մի շարք երկրների թվում Հորդանանի հայերը ծանր վիճակում են և անհրաժեշտ է կազմակերպել նրանց հայրենադարձությունը, սակայն 1962-1982 թթ. Հորդանանից հայրենադարձվեց ընդամենը 14 հոգի[23]:

Դրա փոխարեն մեծաթիվ հայեր տեղափոխվեցին ԱՄՆ: Ըստ Բարլոու Տեր-Մկրտչյանի՝ արաբա-իսրայելական հակամարտությունների պատճառով տեղահանված ավելի քան 8500 հայեր փոխադրվել էին ԱՄՆ 1948 և 1965 թթ. տեղահանված անձանց և ներգաղթի մասին օրենքների միջակայքում[24]: Սրանց զգալի մասը Պաղեստինի հայերն էին, սակայն նրանց միացան բազմաթիվ հորդանանահայեր:

Շոշափելի թվով հայեր էլ արտագաղթեցին Լիբանան: 1960 թ. նրանք այդ երկիր ներգաղթող հայերի 20 տոկոսն էին կազմում (ինչպես և Իրաքի հայերը): Մինչդեռ առաջինը սիրիահայերն էին (50 տոկոս), իսկ սրանց համեմատ ամենացածր ցուցանիշն ունեին եգիպտահայերը (10 տոկոս)[25]:

---

[22] Տե՛ս նույն տեղում, թ. 30-31:

[23] Տե՛ս Մելիքսեթյան Հ., Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Երևան, 1985, էջ 249, 301:

[24] Տե՛ս Der-Mugrdechian B., Armenians and Armenian Americans, 1940-present, Immigrants in American History: Arrival, Adaptation, and Integration, ed. E. R. Barkan, Santa Barbara, 2013, p. 726.

[25] Տե՛ս Boudjikanian A., Le travail autonome auprès des Arméniens du Liban: entre la pratique d'une tradition communautaire et un concept des théories des diasporas,

Հորդանանի հայերի մի զգալի մասն էլ շատ ավելի հեռացավ իր բնակված երկրից՝ մեկնելով Ավստրալիա: Եթե չհաշվենք Հորդանանից 1940-1950-ական թթ. գաղթի անհատական որոշ դեպքերը, ապա այս ուղղությամբ արտագաղթը սկսվեց 1961 թ.[26]: Սկզբնական շրջանում քչերն էին նախընտրում գաղթել Ավստրալիա. Երուսաղեմի հայերի մեծամասնությունը ցանկանում էր տեղափոխվել Կանադա, իսկ Հորդանանի հայերը՝ ԱՄՆ: Հորդանանից Ավստրալիա հաճախ գաղթում էին նաև ԱՄՆ փոխադրվել չկարողանալու պարագայում: Ավստրալիան ընտրելու մղիչ գործոնը այդտեղ ազգականների և ընկերների հաստատված լինելն էր (այստեղ տեղափոխված հորդանանահայերի միայն 9 տոկոսը ծանոթներ չուներ Ավստրալիայում, մինչդեռ 86 տոկոսը վերջիններիս կողմից հովանավորվել էր այստեղ գալու համար): 1962 թ. դրությամբ Սիդնեյի հայերի 7 տոկոսը Հորդանանից եկած հայերն էին[27]: Հորդանանահայերի մի մասն էլ, նախընտրելով համեմատաբար մոտիկ վայր տեղափոխվել, հաստատվում էր Քուվեյթում[28]: Հայտնի են նաև դեպքեր, երբ այստեղ հաստատված հորդանանահայերը հետո արտագաղթել են Ավստրալիա[29]:

Հետաքրքիր է Աքաբայի «Ինթերնեյշնըլ Ինն» հյուրանոցի հայ հաշվապահի ճակատագիրը, որը արտացոլում է տեղի քաղաքական իրադարձությունների բացասական հետևանքները: Լինելով դարեր առաջ Երուսաղեմում հաստատված հայերի շառավիղ՝ 1967 թ. պատերազմից և Արևելյան Երուսաղեմի իսրայելցիներին անցնելուց հետո նա համարվել էր «պաղեստինցի»

Armenians of Lebanon: From Past Princesses and Refugees to Present-Day Community, ed. by Boudjikanian A., Haigazian University/The Armenian Heritage Press, Beirut, 2009, p. 304.

[26] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 426, թ. 1:

[27] Տե՛ս Kirkland J.R., նշվ. աշխ., էջ 81, 105, 151:

[28] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 416, թ. 2:

[29] Տե՛ս Kirkland J.R., նշվ. աշխ., էջ 108:

և կորցրել աշխատանքը: Իր հորդանանյան անձնագրի շնորհիվ աշխատանք էր գտել Աքաբայում, սակայն Հորդանանում ևս «Արևմտյան ափի» պաղեստինցիներն անցանկալի էին: Սև սեպտեմբերից հետո նա իր ընտանիքն ուղարկել էր Աբու Դաբի՝ մտադրվելով ինքն էլ միանալ նրանց: Սակայն, Քուվեյթի պատերազմից հետո նա չէր կարողացել դա անել, քանի որ ԱՄԷ-ն և Քուվեյթը որոշել էին վտարել պաղեստինցիներին, և որպես «պաղեստինցի» նրան չէին թույլատրում մտնել Աբու Դաբի: Դրա հետևանքով նա ստիպված մնում էր Աքաբայում, որտեղ ըստ իր վկայության այլ հայեր չկային[30]:

Բացի ԱՄՆ-ից, Լիբանանից, Ավստրալիայից ու Քուվեյթից Հորդանանի հայերը գաղթեցին Կանադա[31], Ավստրիա[32], Շվեդիա[33], Կատար[34], ԱՄԷ ու Բահրեյն[35], նաև Ֆինլանդիա[36]:

Արտագաղթի հետևանքները Հորդանանի հայ համայնքում

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ստացած 1972 թ. Հորդանանի հայերի մասին տեղեկանքը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել համայնքին

[30] Տե՛ս Քուչուկյան Պ., Սփռվածները: Ուղևորություն աշխարհի հայկական համայնքներ, Երևան, 2013, էջ 73:

[31] 1981 թ. ըստ ծննդյան երկրների՝ Մոնրեալի հայերի 0,1 տոկոսը Հորդանանից էին, տե՛ս Chichekian G., The Armenian community of Québec, Montreal, 1989, p. 54.

[32] Տե՛ս Կապուտիկյան Ս., Հոգու նույն երթուղիներով, Երևան, 1993, էջ 99:

[33] Տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 423:

[34] Տե՛ս Կատար, «Հայկական սփյուռքի վիրտուալ թանգարան», http://armdiasporamuseum.com/%D5%AF%D5%A1%D5%BF%D5%A1%D6%80/

[35] Տե՛ս Հարությունյան Լ., Փաշական Ա., Ծոցի արաբական երկրների հայ համայնքները. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2013, էջ 109, 139:

[36] Տե՛ս Բախչինյան Ա., Հայությունը սկանդինավյան երկրներում. Հայ-սկանդինավյան պատմամշակութային առնչությունները (սկզբից մինչև մեր օրերը), Երևան, 2010, էջ 225:

վերաբերող վիճակագրական որոշ տվյալների մասին. «1971թ. տվյալներով Հորդանանի հայ գաղութը բաղկացած է 1800 անձից, որոնցից 1500 պատկանում է Լուսավորչական համայնքին, իսկ 300-ը՝ հայ կաթողիկե համայնքին: Ըստ զբաղմունքի ամբողջ բնակչությունը կարելի է ստորաբաժանել հետևյալ կերպ. պետական պաշտոնյաներ – 12%, արհեստավորներ 47,5%, վաճառականներ 6%, հողագործներ 3,5%, շարժավարներ 8,5%, բժիշկներ, ճարտարապետներ 2,5%, թոշակառուներ և մեծահասակներ 20%»[37]:

Ըստ Հորդանանում ԽՍՀՄ դեսպանության 1981 թ. տեղեկանքի՝ Հորդանանում ապրում էին շուրջ 3 հազար հայեր, որոնց տեղաբաշխումն ուներ հետևյալ պատկերը. Ամմանում՝ 350 ընտանիք, Զարքայում՝ 30, Իրբիդում՝ 20, Ռուսեյֆայում՝ 10, Գոռ Էլ Սաֆիում՝ 10, Աքաբաում՝ 6, Քարաքում՝ 5, Աջլունում՝ 5[38]: Եթե 1981 թ. հայ կաթոլիկների թիվը շուրջ 300 էր[39], ապա 1989 թ. մնացել էին շուրջ 25 ընտանիքներ: Հայ ավետարանականների պարագայում արդեն 1989 թ. համայնք չէր մնացել[40]:

1980-ական թթ. վերջում ըստ Հ. Աճեմյանի՝ «Իւզպաշեան Կիւլպէնկեան» վարժարանն ուներ վեց դասարաններ, որտեղ սովորում էր 172 աշակերտ (52-ը մանկապարտեզում, 120-ը՝ նախակրթարանում): 1981 թ. «Վաթանի» ակումբը ուներ 700 անդամ, իսկ ՀՄԸՄ-ն՝ 300[41]: 1989 թ. ՀՄԸՄ-ն արդեն ուներ 155, իսկ միության սկաուտական կազմակերպությունը՝ 30 անդամ: Մինչդեռ Ազգային մարզական միությունն ուներ 200, իսկ ՀՕՄ-ը՝

[37] ՀԱԱ, ֆ. 875, ց. 13, գ. 206, թ. 7:
[38] Տե՛ս նույն տեղում, ց. 9, գ. 50, թ. 5-6:
[39] Տե՛ս նույն տեղում, թ. 9:
[40] Տե՛ս Աճէմեան Հ., Յորդանան: Հայերը Յորդանանի մէջ, Լոս Անճելիս, 1989, էջ 15:
[41] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 528, թ. 1:

135 անդամ: 1980-ական թթ. վերջերին փակվեց տեղի հայկական ծերանոցը[42]:

Չնայած այս ամենին 1985 թ. «Հայրենիք» թերթը Հորդանանի համայնքի մասին գրում էր. «Հակառակ անոր որ թուով համեմատաբար մեծ քանակ չեն ներկայացներ, սակայն ազգային իրենց գիտակցութեամբ եւ միութենական-կազմակերպական գործունեութեամբ կը մնան աշխոյժ: Ամմանցի եւ Երուսաղէմցի Հայը կրօնքի չափ նուիրական կը համարի ազգային իր ինքնութիւնը, երբեւէ նկուն չէ եղած ու չէ, պատրաստ է միշտ «պոռալու» հայ ըլլալու իր հպարտութիւնը: Ընտանեկան իր յարկին չափ կը գուրգուրայ միութենական իր տուներուն վրայ. կոգեկոչէ ազգային բոլոր տօները, պատմական թուականները. գործօն կը պահէ մշակութային, մարզական, մարդասիրական իր միութիւնները»[43]:

1994 թ. դրությամբ Հորդանանի հայերը հիմնականում արհեստավորներ և առևտրականներ էին: Ամմանում ապրում էին 300 հայ ընտանիքներ, որոնք քիչ թե շատ բարեկեցիկ էին: Աքաբա, Զարքա, Իրբիդ, Մատաբա և Ռուսեյֆա քաղաքների հայերի թիվը մոտ 50 էր: Ամմանի լուսանկարիչների ¾-ը հայեր էին, կային հայտնի ոսկերիչներ, գորգավաճառներ, ժամագործներ, վարսավիրներ, կոշկակարներ, ավտոմեխանիկներ, վաճառականներ, նաև 5 հայ բժիշկներ[44]: 2005 թ. Ամմանում ապրում էր 3 հազար հայ: ՀԲԸՄ Յուզբաշյան-Գյուլբենկյան

[42] Տե՛ս Աճէմեան Հ., նշվ. աշխ., էջ 11, 13-14, 16:
[43] «Հայրենիք», Բոստոն, 16.I.1985, էջ 2:
[44] Տե՛ս «Գեղարդ» Սուրիահայ տարեգիրք, հ. Ե, էջ 134:

վարժարանում սովորում էր 130[45], իսկ արդեն 2009 թ.՝ 200 աշակերտ[46]:

2011 թ. սկսված սիրիական պատերազմի ընթացքում հարյուր հազարավոր սիրիացիներ հանգրվանեցին Հորդանանում, որոնց թվում որոշ թվով սիրիահայեր: Դեպի Հորդանան հայերի փոքրաթիվ ներհոսքի միտում նկատվել էր նաև Լիբանանի 1975-1990 թթ. քաղաքացիական պատերազմի տարիներին: Սակայն թե՛ լիբանանահայերի, թե՛ սիրիահայերի ներհոսքը, սակավաթիվ լինելու հետևանքով չունեցավ այն նշանակությունը, որը պարունակում էր 1940-ական թթ. վերջում՝ պաղեստինահայերի գաղթի պարագան:

Քանի որ գոյություն չունի հստակ վիճակագրություն, ստորև ներկայացնում ենք Հորդանանի հայերի թվի վերաբերյալ զանազան աղբյուրներից քաղված տվյալներ (որոշ դեպքերում միմյանց հակասող, ոչ միշտ լիովին հավաստի), որոնք ի ցույց են դնում նաև արտագաղթի հետևանքները.

1956 թ.	8 հազար[47]	1985 թ.	4 հազար[48]
1964 թ.	8 հազար[49]	1986 թ.	3 հազար[50]

[45] Տե՛ս Մելքոնյան Է., Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Երևան, 2005, էջ 461:

[46] Տե՛ս Derderian-Aghajanian A., նշվ. աշխ., էջ 38:

[47] Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 23.X.1956, էջ 3: 1954 թ. Ամմանում կար շուրջ 4 հազար, իսկ Երուսաղեմում 2 հազար հայ, տե՛ս «Զարթօնք», Բեյրութ, 21.XI.1954, էջ 2: Նույն տեղում, 24.XI.1954, էջ 2: 1955 թ. Ամմանի հայ գաղութը ըստ որոշ տեղեկությունների հաշվվում էր 4 հազար, ըստ այլ տեղեկությունների՝ 4800 հոգի, տե՛ս նույն տեղում, 6.VII.1955, էջ 2:

[48] Չիլինգիրյան Հ., նշվ. աշխ., էջ 245: Նույն թիվը տե՛ս Ոսկանյան Ա., Սփյուռքահայության թվական կազմը, «Լրաբեր Հասարակական Գիտությունների», 1985, թիվ 9, էջ 49:

[49] Խուրշուդյան Լ., Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Երևան, 1964, էջ 21: Ըստ Կ. Դալլաքյանի 1962 թ. Իսրայելի և Հորդանանի հայերի թիվը միասին կազմում էր 6100 հոգի, տե՛ս Դալլաքյան Կ., Սփյուռքահայ

1965 թ.	8 հազար[51]	1988 թ.	3 հազար[52]
1966 թ.	10 հազար[53]	1990 թ.	3 հազար[54]
1969 թ.	3 հազար[55]:	1994 թ.	2 հազար[56]
1972 թ.	2 հազար[57]	1998 թ.	3 հազար[58]
1973 թ.	2350[59]	2003 թ.	3 հազար[60]
1975 թ	2 հազար[61]	2004 թ.	3 հազար[62]
1980 թ.	3 հազար[63]	2008 թ.	4 հազար[64]

առաջադիմական կազմակերպությունները խաղաղության և դեմոկրատիայի համար մղվող պայքարում, Երևան, 1962, էջ 3:

[50] Տե՛ս Брук С., Население Мира. Этнодемографический сборник. Москва, 1986, с. 250.

[51] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 101, թ. 1: Ըստ Ե. Խաթանասյանի՝ 1965 թ. Հորդանանի և Պաղեստինի հայերի թիվը 9 հազար էր, տե՛ս Խաթանասեան Ե., Հայոց թիվը, Բոստոն, 1965, էջ 28: 1965 թ. Երուսաղեմի հայերի թիվը 3 հազար էր, տե՛ս «Զարթօնք», Բեյրութ, 14.IX.1965, էջ 3:

[52] Տե՛ս «Հայերն աշխարհում» հանրագիտական համառոտ բառարան, էջ 68:

[53] Տե՛ս Տէմիրճեան Վ., Գաւազանագիրք Լիբանանի եւ Սուրիոյ հայոց թեմերու առաջնորդութեանց, Անթիլիաս, 1980, էջ 502:

[54] Տե՛ս Ավագյան Գ., Հայաստանը և հայերս աշխարհում, Երևան, 1993, էջ 144:

[55] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 366, թ. 3:

[56] Տե՛ս «Գեղարդ» Սուրիահայ տարեգիրք, հ. Ե, էջ 134: Նույն թիվը տե՛ս «Հայերն աշխարհում» հանրագիտական համառոտ բառարան, Երևան, 1995, էջ 68:

[57] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, գ. 325, թ. 94: Ըստ Բ. Եղիայանի Հորդանանում և Պաղեստինում 1972 թ. կար 4350 հայ, տե՛ս Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս, 1975, էջ 894:

[58] Տե՛ս Դալլաքյան Կ., Հայ սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Երևան, 1998, էջ 225:

[59] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 528, թ. 1:

[60] Տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 367: Նույն թիվը տե՛ս Չիլինգիրյան Հ., նշվ. աշխ., էջ 245:

[61] Տե՛ս նույն տեղում: Ըստ ՀԽՍՀ արտգործ մինիստրության քաղաքական ինֆորմացիայի բաժնի վարիչի 1975 թ. տեղեկանքի Հորդանանում (այդ թվում Երուսաղեմում) ապրում էին 7 հազար հայեր, տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 573, թ. 1:

[62] Տե՛ս Դալլաքյան Կ., Հայ սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Երևան, 2004, էջ 206:

1984 թ.	4 հազար[65]	2009 թ.	5 հազար[66]

Հորդանանահայերն ԱՄՆ-ում

Հորդանանը լքող հայերի ամենամեծ խումբը հաստատվեց ԱՄՆ-ում: Արդեն 1961 թ. Կ. Գևորգյանը նշում է, որ վերջին տասնամյակի ընթացքում Չիկագո են գաղթել մեծաթիվ հայեր Հորդանանից[67]: Զգալի թվով հորդանանահայեր էլ հաստատվեցին Լոս Անջելեսում: Նրանք Եվրոպայից եկած տեղահանված հայերի, իրանահայերի հետ միասին թարմություն և նոր շունչ բերեցին Լոս Անջելեսի և Կալիֆորնիայի մյուս քաղաքների ազգային-հասարակական կյանքին[68]:

Ամմանի հայերը կարևոր դերակատարում ձեռք բերեցին հատկապես Մեծ Լոս Անջելեսի Օրինջի շրջանի հայկական ազգային կյանքում՝ նախաձեռնելով եկեղեցու և դպրոցի կառուցում: Այստեղ նորեկները կարողացան հասնել նաև սոցիալ-տնտեսական առաջընթացի: 1980-ական թթ. Օրինջի շրջանի գազալցակայանների մեծամասնությունը պատկանում էր Ամմանի հայերին, բացի այդ նրանք ունեին նպարատներ, ճաշարաններ, ոսկերչական և առևտրական տներ: Լոս Անջելեսում էին գործում նաև Ամմանից եկած հայ բժիշկներ, ճարտարագետներ և այլն[69]:

Ըստ 2010 թ. մարդահամարի Լոս Անջելեսի հայերից 401-ը այստեղ էր եկել Հորդանանից[70]: Իսկ 2007 թ. ուսումնասիրության

---

[63] Տե՛ս Համազասպյան Վ., Սովետական Հայաստանը և Սփյուռքը, Երևան, 1980, էջ 19: Նույն թիվը տե՛ս «Գեղարդ» Սուրիահայ տարեգիրք, հ. Ե, էջ 134:
[64] Չիլինգիրյան Հ., նշվ. աշխ., էջ 245:
[65] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 13, գ. 13, թ. 3:
[66] Տե՛ս Derderian-Aghajanian A., նշվ. աշխ., էջ 37:
[67] Տե՛ս Գէորգեան Կ., Ամէնուն տարեգիրքը 1962, Թ. տարի, Պէյրութ, 1961, էջ 299:
[68] Տե՛ս նույն տեղում, էջ 313-314:
[69] Տե՛ս Աճէմեան Հ., նշվ. աշխ., էջ 17-18:
[70] Տե՛ս Գոսագեան Ժ., Լոս Անճելըսի հայ համայնքի ժողովրդագրական պատկերը, Հայերը սեփական և այլազգի միջավայրում. համեմատական

տվյալներով Հորդանանից եկած հայերը ԱՄՆ համայնքի 1 տոկոսից պակասն էին կազմում[71]:

Լոս Անջելեսի հայկական ենթահամայնքների մեջ, ըստ Ժ. Գոսագյանի բաժանման, Հորդանանից գաղթած հայերը մտնում են արաբական երկրներից այստեղ եկածների խմբի մեջ (մյուս խմբերը հին ամերիկահայերը, իրանահայերը և Հայաստանից այստեղ գաղթածներն էին): Այս ենթահամայնքի մասին վերջինս գրում է. «Այս ենթահամայնքի անդամները մեծ մասամբ համախմբուած են կուսակցական կառոյցներու շուրջ: Անոնք կը պահպանեն նաեւ Երկրի հայրենակցական միութիւններու գոյութիւնը:

Այս զանգուածը մեծ մասամբ կը բնակի Սան Կապրիէլ Հովիտի Հիւսիսային, ինչպէս նաեւ Սէն Ֆերնանտօ Հովիտի Հիւսիսային եւ Արեւմտեան ենթաբաժանումներուն մէջ»[72]: Այս ենթախմբի համար բնորոշ է համավրում, որպես առաջին լեզու արևմտահայերենը, իսկ որպես երկրորդ լեզու՝ անգլերենը: Ի տարբերություն նրանց՝ Հայաստանից և Իրանից գաղթած հայերի համար, բնականաբար, առաջին լեզուն արևելահայերենն է, իսկ երկրորդը կրկին անգլերենը: Հին ամերիկահայերի պարագայում առաջին լեզուն անգլերենն է, երկրորդը հայերենը՝ ընդ որում բավականին սահմանափակ գիտելիքներով: Անգլերենը առաջին լեզու է նաև ամերիկածին նոր սերնդի համար[73]:

էթնոսոցիոլոգիական հետազոտություններ, խմբ.՝ Ռ. Կարապետյան, Երևան, 2014, էջ 126:

[71] Տե՛ս Tourism Market Research on the Armenian-American Diaspora Community, February 2007, p. 8.

[72] Գոսագեան Ժ., նշվ. աշխ., էջ 151:

[73] Տե՛ս նույն տեղում, էջ 153:

Այսպիսով ԱՄՆ-ում հաստատված հորդանանահայերը մասնակից դարձան ԱՄՆ հայ համայնքի կյանքին՝ այլ երկրներից եկածների (Լիբանան, Իրան, Հայաստան, Սիրիա) համեմատ ավելի փոքրաթիվ լինելու հետևանքով մաս կազմելով արաբական երկրներից ընդհանուր ենթաէթնիկ խմբին:

EMIGRATION OF ARMENIANS FROM JORDAN (1950-1970s)

(summary)

Tigran Ghanalanyan

In the late 1940s in the result of Arab-Israeli conflict, thousands of Armenians moved from Palestine to Jordan. But after replenishment of the community - in the 1950s Armenians already began to leave Jordan. It was connected with the wars in the region, with uncertainty of the future and other factors.

In 1950-1970s Armenians of Jordan generally moved to the USA (mainly to Los Angeles), Lebanon, Australia, Kuwait. Armenians from Jordan made more or less numerous group in Greater Los Angeles Area, in Orange County.

In consequence of emigration, a number of disadvantageous changes took place in the Armenian community of Jordan. In particular, in 1970-1980s it already essentially differed from the blossoming period of the 1950s: the Armenian community rarefied and the organizations were weakened.

ЭМИГРАЦИЯ АРМЯН ИЗ ИОРДАНИИ
(1950-1970-ые годы)
(резюме)

Тигран Ганаланян

В конце 1940-х гг. в следствии арабо-израильского конфликта тысячи армян переселились из Палестины в Иорданию. Но сразу после пополнения общины - в 1950-х гг. началась эмиграция армян из Иордании. Это было связано с войнами в регионе, с неопределенностью будущего и другими факторами.

В 1950-1970-ые гг. армяне Иордана в основном переехали в США (главным образом в Лос Анджелес), Ливан, Австралию, Кувейт. Более или менее большую группу они составили в Большом Лос-Анджелесе, в округе Ориндж.

В следствии эмиграции в армянской общине Иордании произошли значительные изменения. В частности в 1970-1980-е гг. она уже принципиально отличалась от цветущего периода 1950-х годов- уменьшилось численность армян и ослабли общинные организации.